ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՍՍՀՄ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԸ ԵՎ ԵՐԿՈՒ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Պրոֆ. Ս. Շ. ԶՈՒՐԱԲՅԱՆ

Ժամանակակից աշխարհի միջազգային հարաբերությունների առանցքը կազմում է սոցիալիզմի և կապիտալիզմի համաշխարհային սիստեմների միջև մրցությունը էկոնոմիկայի, իդեոլոգիայի, քաղաքականության, կուլտուրայի և հասարակական կյանքի այլ ասպարեզներում։ Դրա հիմնական օղակն է տնտեսության բնագավառում տեղի ունեցող մրցումը։

Զարգացած կապիտալիստական երկրների հետ տնտեսական մրցման, տնտեսապես նրանց հասնելու և անցնելու պրոբլեմը քննարկելիս անպայմանորեն նկատի պետք է առնվեն մի շարք հանգամանքներ.

1. Ցարական Ռուսաստանը, ինչպես հայտնի է, տեխնիկա-տնտեսական տեսակետից շատ ետ էր մնում զարգացած կապիտալիստական երկրներից, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներից։

2. Սովետական իշխանությունը կապիտալիստական երկրների հետ տնտեսական մրցումը սկսեց ոչ թե 1913 թ. Ռուսաստանի առանց այն էլ շատ ցածր տեխնիկա-տնտեսական մակարդակից, այլ 1920—1921 թթ. մակարդակից, երբ օտարերկրյա իմպերիալիստական պետությունների ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների հետևանքով Սովետական Ռուսաստանի էկոնոմիկան նախապատերազմյան 1913 թ. մակարդակի համեմատությամբ մեծ անկում էր ապրել։

3. 1941—1945 թթ. Հայրենական պատերազմի ընթացքում ֆաշիստական Գերմանիայի հորդաները հսկայական վնաս հասցրին մեր երկրին։ Աշխարհի ոչ մի երկիր երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում այնպիսի ավերումներ, նյութական և մարդկային կորուստներ չունեցավ ինչպես Սովետական Միությունը, իսկ գլխավոր կապիտալիստական երկիր։ ԱՄՆ-ը պատերազմի հետևանքով ոչ միայն չքայքայվեց, այլ ընդհակառակը, ավելի ուռճացավ և ուժեղացավ տնտեսապես։ Նշված այս փաստերի հետևանքով պատերազմի տարիներին ՍՍՀՄ արդյունաբերական արտադրանքի հարաբերակցությունը ԱՄՆ-ի նկատմամբ նվազեց 17 տոկոսով և միայն 1950 թ. նրանց միջև վերականգնվեց նախապատերազմյան հարաբերակցությունը։

4. ՍՍՀՄ բնակչության ավելի մեծ թիվը, քան զարգացած այս կամ այն կապիտալիստական երկրինը, մասնավորապես ԱՄՆ-ինը, որը կարևոր նշանակություն ունի բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի չափի տեսակետից՝ նույնիսկ երկու երկրներում այս կամ այն տեսակի արտադրանքի ծավալի հավասարության պայմաններում։

5. Բնակչության կառուցվածքը, տնտեսության առաջատար ճյուղում՝ արդյունաբերությունում աշխատողների ավելի բարձր տեսակարար կշիռը և ընդհակառակը, գյուղատնտեսության աշխատողների ցածր տեսակարար կշիռը ԱՄՆ-ում Սովետական Միության համեմատությամբ։ Բացի այդ, ՍՍՀՄ-ում աշխատողների կազմում կանանց տեսակարար կշիռը զգալիորեն բարձր է, քան զարգացած կապիտալիստական երկրներում, որը այս կամ այն չափով իր ազդեցությունն է թողնում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի և մակարդակների վրա։

6. Երկու սիստեմների տնտեսական զարգացման հետագա հնարավորությունները, տնտեսական աճի սպասվող տեմպերի հարաբերակցությունը և այլն։

* * *

Կուսակցության XXV համագումարում ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ընկ. Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ «կոմունիստները հեռու են պնդելուց, թե տեղի կունենա կապիտալիզմի «ինքնափլուզում»։ Նա դեռ բավական ռեզերվներ ունի։ Սակայն վերջին տարիների իրադրությունները նոր ուժով հաստատում են, որ կապիտալիզմը ապագայից զուրկ հասարակարգ է»[1]։ Սա նշանակում է, որ եթե կապիտալիզմը իր գոյության սկզբնական շրջանում առաջավոր տնտեսական և հասարակական ձև էր, ապա ժամանակակից պայմաններում, իր իմպերիալիստական փուլի և ընդհանուր ճգնաժամի պայմաններում նա արդեն չի արտահայտում մարդկության առաջադիմական զարգացումը։ Սակայն այդ չի նշանակում, թե ժամանակակից կապիտալիզմը արդեն ընդունակ չէ տեխնիկա-տնտեսական որևէ զարգացում տալու, քանի որ նա «դեռ բավական ռեզերվներ ունի»։ Թեպետև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացման և իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզման հետևանքով կապիտալի գործադրման ոլորտը մեծ չափով նեղացավ, սակայն բուրժուազիան, օգտագործելով եղած ռեզերվները (հատկապես պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի, նեոգաղութատիրության, ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության ընձեռած հնարավորությունները), կարողացավ որոշ չափով (թեպետև իսոր տնտեսական ու սոցիալական հակասություններով, անհամամասնություններով, գերարտադրության ճգնաժամերով, էներգետիկ, հումքային և վալյուտային ճգնաժամերի, մասսայական գործազրկության պայմաններում) ապահովել իր տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր մինչ-պատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ։ Այսպես, եթե 1913—1937 թթ. արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճը Անգլիայում կազմել է 1,8 տոկոս, ապա 1957—1968 թթ.՝ 2,9 տոկոս, ԱՄՆ-ում, համապատասխանաբար՝ 2,7 և 4,6, Ֆրանսիայում՝ 0,7 և 4,6, Իտալիայում՝ 2,5 և 8,0, ԳՖՀ-ում՝ 1,3 և 3,7, իսկ Ճապոնիայում՝ 6,6 և 13,4 տոկոս[2]։ Այս

---

1 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1976, էջ 40։

2 «Политическая экономия современного монополистического капитализма», т. I, М., 1970, էջ 65։

տվյալները միաժամանակ ցույց են տալիս կապիտալիզմի տնտեսական անհամաչափ զարգացման պատկերը, երբ տարբեր երկրների արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերի միջև գոյություն ունեն խիստ տարբերություններ։ Հետևաբար երկու սիստեմների տնտեսական մրցման հարցերը քննարկելիս պետք է նկատի ունենալ կապիտալիստական տնտեսության աճի հնարավորությունները և տեմպերը։

Թեպետև երկու սիստեմների տնտեսական մրցումը պատմականորեն սկսվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, սակայն այն փաստորեն սկսվեց ավելի ուշ, խաղաղ տնտեսական շինարարությանն անցնելուց հետո՝ 1920—1921 թթ.։ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության X կոնֆերանսում (1921 թ.) Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ ներկայումս միջազգային հեղափոխության վրա մենք ազդեցություն ենք գործում մեր տնտեսական քաղաքականությամբ։ Իսկ դրանից մի քիչ առաջ Մոսկվայի կուսակցական կազմակերպության ակտիվի ժողովում նա նշում էր, որ մենք պետք է հակադրենք տնտեսությունը վարելու երկու եղանակ՝ սոցիալիստական և կապիտալիստական, որ «այստեղ նույնպես պատերազմ է, որտեղ մենք պետք է վճռական մարտ տանք»։ Միաժամանակ Վ. Ի. Լենինը վստահություն էր հայտնում, որ «սովետական իշխանությունը կհասնի և կանցնի կապիտալիստներին, և որ մենք կունենանք ոչ միայն զուտ տնտեսական օգուտ»[3]։

Վ. Ի. Լենինի այդ համոզմունքը հենվում էր այն բանի խոր գիտակցության վրա, որ սոցիալիստական տնտեսաձևը խոշորագույն առավելություններ ունի կապիտալիստականի նկատմամբ։

Սոցիալիստական տնտեսության առավելությունների հիմքում ընկած են՝ արտադրության միջոցների հասարակական սեփականությունը, մարդու կողմից մարդու շահագործման վերացումը, նոր, գիտակցական վերաբերմունքը աշխատավորների կողմից դեպի արտադրության միջոցները, դեպի աշխատանքը, որն իր ցայտուն արտահայտությունն է գտնում սոցմրցման տարբեր ձևերի ծավալման մեջ, աշխատանքի և արտադրության ավելի բարձր կազմակերպումը, սոցիալիստական արտադրահարաբերությունները և սոցիալիզմի տնտեսական օրենքները, որոնք խթան են հանդիսանում արտադրողական ուժերի արագ զարգացման և ռացիոնալ տեղաբաշխման համար, ժողովրդական տնտեսության պլանաչափ, համամասնական զարգացումը, սոցիալիստական պետության տնտեսական դերի հսկայական մեծացումը, որը առաջին հերթին արտահայտվում է տնտեսության զարգացման պլանավորման մեջ, երբ ժողովրդական տնտեսությունը սոցիալիզմի տնտեսական օրենքների ճանաչման և գիտակցական օգտագործման հիման վրա զարգանում է առանց կապիտալիզմին հատուկ ցիկլային զարգացման, պարբերաբար կրկնվող գերարտադրության ճգնաժամերի, անկումների, գործազրկության և այլն։

Սոցիալիստական տնտեսության այս առանձնահատկություններն ու առավելություններն են, որ ապահովում են նրա աճի ավելի բարձր տեմպերը կապիտալիստական տնտեսաձևի համեմատությամբ։

Տնտեսական երկու սիստեմների աճի տեմպերի հարաբերակցությունը ճիշտ չի լինի դիտել կարճատև, ասենք՝ 1—2 տարվա ժամանակամիջոցում,

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 575, 576։

որովհետև այդ դեպքում մի շարք ժամանակավոր գործոններ կխեղաթյուրեն դրանց հարաբերությունը (գյուղատնտեսության մեջ՝ բնակլիմայական պատահարները, երաշտը և այլն, գերարտադրության ճգնաժամի տարիները կապիտալիստական երկրներում)։ Երկարատև ժամանակաշրջանի օրինաչափությունները հայտնաբերելու համար անհրաժեշտ է վերցնել երկու սիստեմների երկրների տնտեսական զարգացման հինգ և ավելի տարիների ժամանակահատվածը։ Տեսնենք, թե ինչպիսի պատկեր գոյություն ունի երկու սիստեմների արդյունաբերության աճի տեմպերի հարաբերակցության ասպարեզում վերջին երեք հնգամյակների ընթացքում (միջին տարեկան աճը տոկոսներով)[4]։

	1961—1965 թթ.	1966—1970 թթ.	1971—1975 թթ.
Սոցիալիստական երկրներ	7,2	7,6	8,7
Այդ թվում ՍՍՀՄ	8,5	8,5	7,5
Զարգացած կապիտալիստական երկրներ	6,1	5,4	1,8
Այդ թվում ԱՄՆ	5,6	3,6	1,2

Այս տվյալներից բացահայտ կերպով երևում է սոցիալիստական սիստեմի արդյունաբերության աճի տեմպերի մեծ չափերով գերազանցումը զարգացած կապիտալիստական երկրների նկատմամբ, մանավանդ վերջին՝ 1971—1975 թթ. հնգամյակում, երբ գլխավոր կապիտալիստական երկրներում ծավալվեց մինչև այժմ էլ շարունակվող գերարտադրության ճգնաժամը, որն ամենախորն է վերջին 40 տարվա ընթացքում։

Հայտնի է, որ ներկայումս Եվրոպայում գործում են երկու տիպի տնտեսական ինտեգրացիաներ՝ սոցիալիստական (ՏՓԽ) և կապիտալիստական («Ընդհանուր շուկա»)։ Երկու սիստեմների տնտեսական մրցման, սոցիալիստական տնտեսաձևի առավելությունների տեսակետից բնորոշ է նաև դրանց տնտեսական աճի տեմպերի հարաբերակցությունը։ Եթե 1970 թ. ընդունենք որպես ելակետային՝ 100, ապա 1975 թ. ՏՓԽ-ի երկրների արդյունաբերական արտադրանքի աճը կազմել է 145 տոկոս, իսկ «Ընդհանուր շուկայի» երկրներինը՝ 105 տոկոս, ազգային եկամուտը աճել է համապատասխանաբար՝ 4,8 և 2,8 անգամ[5]։ Այստեղ ևս որոշակի են դառնում սոցիալիստական տնտեսության, նրա ինտեգրացիայի խոշոր առավելությունները կապիտալիստականի նկատմամբ։ Կուսակցության XXV համագումարում Ա. Ն. Կոսիգինը նշեց, որ 1950-ից մինչև 1975 թ., այսինքն 25 տարվա ընթացքում ՍՍՀՄ և Տնտեսական փոխօգնության խորհրդի մյուս երկրների արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճը ավելի քան երկու անգամ բարձր է եղել, քան զարգացած կապիտալիստական երկրներում. այն համապատասխանաբար կազմել է 9,6 և 4,6 տոկոս[6]։ Անհրաժեշտ է նշել, որ տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների աճի տեմպերով

4 «Экономическая газета», 1976, № 9, էջ 23։

5 Նույն տեղում, № 8, էջ 20։

6 «Սովետական Հայաստան», 2 մարտի, 1976։

սոցիալիստական երկրները գերազանցում են կապիտալիստական երկրներին, մասնավորապես ԱՄՆ-ին, այդ թվում նաև աշխատանքի արտադրողականության աճի տեմպերով։ 1951—1974 թթ. հասարակական աշխատանքի արտադրողականության տարեկան միջին աճը ՍՍՀՄ-ում կազմել է 5,9 տոկոս, իսկ ԱՄՆ-ում՝ 2,4 տոկոս, արդյունաբերության մեջ համապատասխանաբար՝ 6,2 և 3,3 տոկոս[7]։

Երկու սիստեմների տնտեսական մրցման հարցը կապված է նաև այն հանգամանքի հետ, թե ինչպիսի տեմպերով հետագայում կզարգանան սոցիալիստական և կապիտալիստական երկրների տնտեսությունները։ Այդ հարցին անհամեմատ հեշտ է պատասխան տալ սոցիալիստական պլանային տնտեսության վերաբերյալ, սակայն դժվար է կռահել կապիտալիստական տնտեսության հետագա աճի տեմպերը։ 1976—1980 թթ. հնգամյակում ՍՍՀՄ արդյունաբերական արտադրանքի աճը նախատեսվում է 35—39 տոկոսով, այսինքն միջին տարեկան աճը կազմելու է մոտավորապես 7,5 տոկոս։ Եթե 1976 թ. պլանով նախատեսված է այդ տարվա արդյունաբերական արտադրանքի աճի ավելի ցածր տոկոս (4,3), ապա դա հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության համար 1975 թ. բնակլիմայական խիստ անբարենպաստ պայմաններով։ Հնգամյակի մնացած չորս տարում արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճի տեմպերը ավելի բարձր պետք է լինեն, քան 7,5 տոկոսը, որպեսզի ապահովվի հնգամյակի առաջադրանքների կատարումը։ Ընթացիկ հնգամյակում, ըստ կուսակցության XXV համագումարի կանխատեսումների, ՍՍՀՄ գյուղատնտեսական արտադրության միջին տարեկան ծավալն ավելացվելու է 14—17 տոկոսով, այսինքն միջին տարեկան աճը կազմելու է մոտ 3 տոկոս։

Հարց է առաջանում, թե հետագայում, հատկապես 1976—1980 թթ., ինչպիսի՞ն կլինեն զարգացած կապիտալիստական երկրների, մասնավորապես դրանցից ամենահզոր երկրի՝ ԱՄՆ-ի արդյունաբերության և գյուղատնտեսության աճի տեմպերը։ Պետք է նշել, որ կապիտալիստական երկրների տնտեսության աճի տեմպերի հարցը ներկայումս լուրջ մտահոգության առարկա է դարձել բուրժուական պետության, քաղաքական և հասարակական գործիչների, հենց իրենց՝ կապիտալիստների համար՝ կապված, մի կողմից, կապիտալիստական էկոնոմիկայի անկայունության հետ, մանավանդ ժամանակակից տնտեսական ճգնաժամի, մասսայական գործազրկության պայմաններում, իսկ մյուս կողմից՝ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի նվաճումների հետ կապիտալիզմի հետ տնտեսական մրցման ասպարեզում։ Բուրժուական քաղաքական գործիչները և տնտեսագետները կանխագուշակումներ են անում կապիտալիստական էկոնոմիկայի, հատկապես արդյունաբերության հնարավոր աճի տեմպերի վերաբերյալ։ Համենայն դեպս, եթե մենք միջին թվով ընդունենք զարգացած կապիտալիստական երկրների արդյունաբերության նույնիսկ 3—4 տոկոս տարեկան աճ, ապա սոցիալիզմի առավելությունները կապիտալիզմի նկատմամբ հետագայում ևս բացահայտ կլինեն։

---

[7] «Народное хозяйство СССР в 1974 году. Статистический ежегодник», 1975, էջ 102։

Գլխավորապես սոցիալիստական պլանային տնտեսության աճի բարձր տեմպերի շնորհիվ է, որ արագորեն բարձրանում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի տեսակարար կշիռը ամբողջ աշխարհի արտադրանքում։ Այսպես, եթե 1937 թ. սոցիալիզմի բաժինը ամբողջ աշխարհի արդյունաբերական արտադրանքում կազմում էր 10 տոկոսից էլ պակաս, ապա 1950 թ. (արդեն սոցիալիզմի համաշխարհային սիստեմը) մոտ 20 տոկոս էր, իսկ ներկայումս՝ ավելի քան 40 տոկոս։

Արագորեն փոքրանում են սոցիալիզմի և կապիտալիզմի տնտեսական հիմնական ցուցանիշների տարբերությունները, այդ թվում նաև արտադրանքի հիմնական տեսակների տարեկան բացարձակ աճի ծավալով։ Սովետական Միությունը արդեն գերազանցում է ԱՄՆ-ին արտադրանքի մի շարք կարևոր տեսակների տարեկան բացարձակ աճի ծավալով (նավթ, չուգուն, պողպատ, տրակտորներ, ցեմենտ, բամբակե և բրդե գործվածքեղեն, կաշվե կոշիկ, շաքար, շաքարավազ, կենդանական յուղ և այլն), սակայն դեռ ետ է մնում էլեկտրաէներգիայի, քիմիական մանրաթելի, մետաքսե գործվածքեղենի, ծծմբաթթվի, բնական գազի տարեկան բացարձակ աճի ծավալով։ Սովետական Միությունը մի շարք կարևորագույն արտադրանքների թողարկման ծավալով արդեն գերազանցել է ԱՄՆ-ին, կամ ընդհուպ մոտեցել նրան։ Կուսակցության XXV համագումարում Ա. Ն. Կոսիգինը իր զեկուցման մեջ նշեց, որ դեռ մինչև իններորդ հնգամյակը մեր երկիրը արտադրում էր ավելի շատ չուգուն, երկաթի, մարգանեցի, քրոմի հանքաքար, ածուխ և կոքս, ցեմենտ, կալիումական աղեր և ֆոսֆատի հումք, տրակտորներ, ջերմաքարշեր և էլեկտրաքարշեր, բամբակ, բուրդ, վուշ, իսկ իններորդ հնգամյակում նաև պողպատ, նավթ, հանքային պարարտանյութեր, քան աշխարհի մի որևէ երկիր[8], հետևաբար նաև ԱՄՆ-ը։

Ընթացիկ տասներորդ հնգամյակում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության պոտենցիալի զորացման շնորհիվ արտադրանքի շատ տեսակների տարեկան բացարձակ աճի ծավալները ավելի են մեծացել։ Բավական է նշել, որ արդյունաբերական արտադրանքի 1 տոկոս աճը կկազմի ավելի քան 5 միլիարդ ռուբլի, կամ 1,4 անգամ ավելի, քան իններորդ հնգամյակում և 2,1 անգամ ավելի, քան ութերորդ հնգամյակում։

ՍՍՀՄ և ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի մի շարք կարևոր տեսակների հարաբերակցությունը 1974 և 1975 թթ.[9] երևում է հետևյալ աղյուսակի տվյալներից[10].

---

8 Տե՛ս «Սովետական Հայաստան», 2 մարտի 1976։

9 ԱՄՆ-ի վերաբերյալ վերցված են 1974 թ. տվյալները, իսկ ՍՍՀՄ վերաբերյալ՝ 1975 թ.։ Պետք է նկատի ունենալ, որ 1974 թ. սկսված ճգնաժամի հետևանքով ԱՄՆ-ի արտադրությունը 1975 թ. ոչ թե աճել, այլ զգալիորեն նվազել է։ Հետևաբար 1975 թ. հարաբերակցությունը ՍՍՀՄ և ԱՄՆ-ի միջև նշված արտադրանքների գծով կլիներ հօգուտ Սովետական Միության, այլ ոչ թե ԱՄՆ-ի։

10 «Экономическое положение капиталистических и развивающихся стран. Обзор за 1974 г. и начало 1975 г.», приложение к журналу «Мировая экономика и международные отношения» 1975, № 8, էջ 75։ «Правда», 1 февраля 1976.

Արտադրանքի տեսակները	ՍՍՀՄ (1975 թ.)	ԱՄՆ (1974 թ.)	ՍՍՀՄ հարաբերակցությունը ԱՄՆ-ի համեմատությամբ (տոկոսներով)
Հարածուխ—մլն տոննա	701	548	128,0
Նավթ —»—	491	431	114,0
Բնական գազ—մլրդ մ³	289	620	46,6
Էլեկտրաէներգիա—մլրդ կ/ժ	1038	1941	53,5
Երկաթի հանքաքար—մլն տոննա	233	48	485,4
Չուգուն —»—	103	89	117,0
Պողպատ —»—	141	132	107,0
Ցեմենտ —»—	122	73	167,0
Ավտոմեքենա—մլն հատ	1,96	9,6	20,4
այդ թվում մարդատար—մլն հատ	1,2	7,4	16,0
Տրակտոր—հազար հատ	550	269 (առանց այդերոստանայինի)	204,4
Ռադիոընդունիչ—մլն հատ	8,4	44,0	19,0
Հեռուստացույց —»—	7,0	15,3	45,8
Սառնարան —»—	5,6	6,0	93,3
Լվացքի մեքենա —»—	3,3	5,0	66,0
Բրդե գործվածքեղեն—մլն մ²	740	190	389,0
Բամբակե գործվածքեղեն —»—	6,6	5,4	122,0
Կաշվե կոշիկ—մլն զույգ	698	328	212,8

Երկու սիստեմների տնտեսական մրցումը առաջին հերթին տեղի է ունենում տնտեսության վճռական ճյուղի՝ արդյունաբերության գծով, ինչպես նաև գյուղատնտեսության ասպարեզում։ Գյուղատնտեսական արտադրությունում, ինչպես հայտնի է, կան երկու գործոններ՝ բնական և տնտեսական, որոնցից վճռականը տնտեսական գործոնն է։ Սակայն բնական գործոնների դերը (հողը, նրա որակը, կլիմայական պայմանները, ջրային ռեսուրսները և այլն) նույնպես բավական մեծ է։ Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXV համագումարում Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ նշեց, որ «...անցած հնգամյակում գյուղատնտեսությունը զարգանում էր բնության տարերքի ուժերի դեմ մղվող շատ ծանր պայքարում։ Հինգ տարիներից միայն մեկը՝ 1973 թվականն էր լավ, իսկ երկու տարիները՝ 1972 և 1975 թվականները աչքի էին ընկնում չտեսնված երաշտով։ Այդպիսի աննպաստ հանգամանքների առաջ մեր գյուղը կանգնած չէր եղել ոչ մի հնգամյակում»[11]։ Հետևաբար երկու սիստեմների գյուղատնտեսության զարգացման հարաբերակցության հարցերը քննարկելիս պետք է հաշվի առնվեն այդ երևույթները և արտադրանքի աճի տեմպերը դիտվեն ավելի երկարատև ժամանակաշրջանում, որպեսզի որոշակի դառնա այն հարցը, թե սոցիալիստական դյուղատնտե-

[11] Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1976, էջ 60։

սությունը ինչպիսի առավելություններ ունի կապիտալիստականի նկատմամբ։

Կապիտալիստական գյուղատնտեսության համար բնորոշ է հողի և արտադրության այլ միջոցների մասնավոր սեփականությունը, մոնոպոլիստական խոշորագույն տնտեսությունների դերի ու նշանակության ավելի ու ավելի մեծացումը, մանր ու միջակ գյուղացիական, ֆերմերական տնտեսությունների քայքայումը, ոչ համարժեքային փոխանակությունը արդյունաբերության և գյուղատնտեսության միջև։ Իսկ ինչ վերաբերում է գյուղատնտեսության տեխնիկական բազային, ապա պետք է նշել, որ եթե XX դարի սկզբներին զարգացած կապիտալիստական երկրների գյուղատնտեսությունը, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, գտնվում էր արտադրության մանուֆակտուրային ստադիայում, ապա ներկայումս այն հիմնականում դուրս է եկել այդ ստադիայից և թևակոխել մեքենական արտադրության ստադիան, որը նպաստավոր պայմաններ է ստեղծել գյուղատնտեսության մասնագիտացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի աճի համար։

Սոցիալիստական գյուղատնտեսությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ռացիոնալ տնտեսություն վարելու համար, միջտնտեսական կապերի, ագրոկոմպլեքսների զարգացման համար, որի վրա հատուկ ուշադրություն դարձրեց կուսակցության XXV համագումարը։ Այդ ամենն իր արտահայտությունն է գտնում նրա ավելի արագ աճի տեմպերում։ 1951—1974 թթ. գյուղատնտեսական արտադրանքի տարեկան միջին աճը ՍՍՀՄ-ում կազմել է 3,8 տոկոս, իսկ ԱՄՆ-ի գյուղատնտեսությանը՝ 1,6 տոկոս[12]։ Սակայն աշխատանքի արտադրողականության մակարդակով ՍՍՀՄ գյուղատնտեսությունը, չնայած ձեռք բերած նվաճումներին, դեռ զգալիորեն ետ է մնում ԱՄՆ-ից։ Դրա պատճառներն են ԱՄՆ-ի տեխնիկական բարձր զինվածությունը և արտադրության մեծ մասնագիտացումը։ Իններորդ հնգամյակում, չնայած որոշ տարիների կլիմայական խիստ անբարենպաստ պայմաններին, ՍՍՀՄ գյուղատնտեսության արտադրանքի միջին տարեկան ծավալը 13 տոկոսով ավելի էր, քան ութերորդ հնգամյակում, իսկ ցորենի միջին տարեկան արտադրանքը 14 միլիոն տոննայով ավելի էր, քան նախորդ հնգամյակում։

Կուսակցության XXV համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց գյուղատնտեսության հետագա զարգացման խնդիրների վրա։ Դա առաջին հերթին իր արտահայտությունը գտավ գյուղատնտեսության բնագավառում կապիտալ ներդրումների աճի մեջ։ Եթե իններորդ հնգամյակում գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 131 միլիարդ ռուբլի, ապա տասներորդ հնգամյակում այն կազմելու է 171,7 միլիարդ ռուբլի, այսինքն ողջ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ավելի քան մեկ քառորդը։ Ընթացիկ հնգամյակում երկրի գյուղատնտեսությունը կստանա 23 միլիարդ ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ (իններորդ հնգամյակի 15,8 միլիարդ ռուբլու դիմաց), 538 հազար հացահատիկային կոմբայն, 1 900 հազար տրակտոր, 1 350 հազար բեռնատար ավտոմեքենա, 467 միլիոն տոննա պարարտանյութ (որը 1,5 անգամ ավելի է, քան նախորդ հնգամյակում)։ Հնգամյակում գյուղատնտեսության միջին տարե-

---

12 «Народное хозяйство СССР в 1974 году», էջ 102։

կան արտադրանքը ավելացվելու է 14—17 տոկոսով։ Կարևոր է այստեղ նշել, որ գյուղատնտեսական արտադրանքի աճը տեղի պետք է ունենա աշխատանքի արտադրողականության, հողերի բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման հաշվին՝ գյուղատնտեսության մեջ աշխատողների թվաքանակի անփոփոխության կամ նույնիսկ նվազեցման պայմաններում։ Բերված տվյալները նշանակում են, որ տասներորդ հնգամյակում Սովետական Միության գյուղատնտեսությունը նոր լուրջ նվաճումներ ձեռք կբերի կապիտալիստական երկրների գյուղատնտեսության նկատմամբ՝ թե՛ արտադրանքի ավելացման և թե՛ աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում։

Այժմ որոշ համեմատություն անցկացնենք ՍՍՀՄ և ԱՄՆ-ի հողագործության մակարդակների միջև արտադրանքի հիմնական տեսակների գծով[13]։ Հացահատիկի և կարտոֆիլի արտադրությունը ՍՍՀՄ-ում և ԱՄՆ-ում 1974 թ. ներկայացնում էր հետևյալ պատկերը (միլիոն տոննա)[14].

	ԱՄՆ	ՍՍՀՄ	ՍՍՀՄ ԱՄՆ-ի նկատմամբ (տոկոսներով)
Հացահատիկ	204,8	195,6	94,4
այդ թվում ցորեն	48,4	83,8	173,0
Եգիպտացորեն	118,145	12,1	10,2
Կարտոֆիլ	15,382	80,7	526,5

Այստեղ, նախ, աչքի են ընկնում հացահատիկային կուլտուրաների կառուցվածքային խիստ տարբերությունները ՍՍՀՄ և ԱՄՆ-ի միջև։ Ինչպես տեսնում ենք, 1974 թ. ՍՍՀՄ հացահատիկի արտադրությունը կազմել է ԱՄՆ-ի արտադրանքի 94,4 տոկոսը, սակայն ցորենի արտադրությունը՝ 173 տոկոսը։ ՍՍՀՄ մեծ չափով գերազանցել է ԱՄՆ-ին նաև կարտոֆիլի արտադրությամբ (526,5 տոկոս), իսկ եգիպտացորենի արտադրությամբ, ընդհակառակը, մեծ չափով զիջում է ԱՄՆ-ին, տալով նրա արտադրանքի միայն 10,2 տոկոսը։

ՍՍՀՄ տասներորդ հնգամյակում հացահատիկի տարեկան միջին արտադրությունը հասցվելու է 215—220 միլիոն տոննայի, ընդ որում դրա բացարձակ աճը կազմելու է 35,5—38,5 միլիոն տոննա։ Պետք է սպասել, որ տասներորդ հնգամյակում ՍՍՀՄ ոչ միայն կհասնի, այլև կգերազանցի ԱՄՆ-ին հացահատիկի արտադրությամբ, թեև նշված կառուցվածքային տարբերությունները հիմնականում կշարունակեն գոյություն ունենալ։

ՍՍՀՄ և ԱՄՆ-ի միջև կառուցվածքային էական տարբերություններ գոյություն ունեն նաև անասնապահության ասպարեզում։ ԱՄՆ-ի անասնապա-

---

13 Նպատակահարմար ենք գտնում վերցնել 1974 թ. տվյալները ոչ միայն այն պատճառով, որ ԱՄՆ-ի գյուղատնտեսության մասին վերջին տվյալները վերաբերում են 1974 թ., այլև այն, որ այդ թվականին արտակարգ տարբերություն չկար ՍՍՀՄ և ԱՄՆ-ի գյուղատնտեսության կլիմայական պայմանների միջև, ինչպես դա գոյություն ուներ 1975 թ. (երաշտը ՍՍՀՄ-ում)։

14 «Экономическое положение капиталистических и развивающихся стран, обзор за 1974 г. и начало 1975 г.», էջ 72։ «Правда», 26 января 1975 (տոկոսների հաշվարկը կատարված է մեր կողմից)։

հության մեջ գերակշռում է մսային անասնապահությունը (խոշոր եղջերավոր), իսկ կաթնատու անասունների տեսակարար կշիռը զգալիորեն ցածր է Սովետական Միությունից։ Դա իր արտահայտությունն է գտնում 1974 թ. ՍՍՀՄ և ԱՄՆ-ի միջև մսի և կաթի արտադրության հարաբերակցության մեջ, որը երևում է ստորև բերվող տվյալներից.

	ՍՍՀՄ	ԱՄՆ	ՍՍՀՄ հարաբերակցությունը ԱՄՆ-ի համեմատությամբ (տոկոսներով)
Միս—միլիոն տոննա	14,5	16,7	86,8
Կաթ —»—	91.8	52,3	175,5
Յուղ—հազ. տոննա	1260,0	422,0	298,2

Այսպիսով, ՍՍՀՄ-ը անասնապահական հիմնական մթերքների գծով ԱՄՆ-ից ետ է մնում միայն մսի արտադրությամբ, 1974 թ. տալով նրա արտադրանքի 86,8 տոկոսը, սակայն մեծ չափով գերազանցում է ԱՄՆ-ին կաթի արտադրությամբ (175,5 տոկոս) և առավել մեծ չափով՝ կենդանական յուղի արտադրությամբ (298,2 տոկոս)։ Ընթացիկ հնգամյակում ՍՍՀՄ անասնապահությունը և նրա մթերատվությունը զգալի չափով աճելու են։ 1976—1980 թթ. մսի տարեկան միջին արտադրությունը հասնելու է 15,0—16,7 միլիոն տոննայի, իսկ կաթինը՝ 94—96 միլիոն տոննայի։ Այս նշանակում է, որ մսի արտադրությամբ Սովետական Միությունը ընդհուպ կմոտենա ԱՄՆ-ի արտադրությանը, իսկ կաթի և յուղի արտադրությամբ ԱՄՆ-ին կգերազանցի ավելի մեծ չափերով։

Երկու սիստեմների տնտեսական մրցման կարևորագույն ցուցանիշներից է նաև բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալը, ընդ որում բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալը կապված է երկու հիմնական գործոնի հետ. ա) արտադրանքի բացարձակ ծավալի, և բ) բնակչության թվի, արտադրանքի աճի տեմպերի և բնակչության աճի տեմպերի հարաբերակցության հետ։ Այստեղից հետևում է, որ արտադրանքի նույն ծավալի դեպքում ՍՍՀՄ բնակչության մեկ շնչին ավելի քիչ արտադրանք կընկներ, քան ԱՄՆ-ում, քանի որ ՍՍՀՄ բնակչությունը զգալիորեն ավելի է քան ԱՄՆ-ինը կամ մյուս զարգացած կապիտալիստական երկրներինը։ Բացի այդ, ՍՍՀՄ բնակչության աճի տեմպերը, ընդհանուր առմամբ, ավելի բարձր են, քան զարգացած կապիտալիստական երկրներինը։ Քննարկվող հարցի կապակցությամբ մի հանգամանք ևս նկատի պետք է առնվի. դա այն է, որ անհրաժեշտություն չկա, որպեսզի ՍՍՀՄ (և սոցիալիստական մյուս երկրները) արտադրանքի բոլոր տեսակների գծով գերազանցեն կապիտալիստական երկրներին բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալով։ Աշխատանքի միջազգային հասարակական բաժանման շնորհիվ ՏՓԽ-ի երկրներից ամեն մեկը, ելնելով իր բնակլիմայական, տնտեսական և այլ կարգի պայմաններից, գլխավոր ուշադրությունը դարձնում է արտադրանքի որոշակի տեսակների թողարկման վրա։

Սոցիալիստական պլանաչափ զարգացող տնտեսության մեծ առավելությունները, նրա աճի ավելի բարձր տեմպերը հանգեցրել են այն բանին, որ

Սովետական Միությունը զգալիորեն փոքրացրել է այն հսկայական տարբերությունը, որ նախկինում գոյություն ուներ ցարական Ռուսաստանի, ապա ՍՍՀՄ և զարգացած կապիտալիստական երկրների միջև ոչ միայն արտադրանքի բացարձակ ծավալով, այլև բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքով։ Ինչպես տեսանք, ՍՍՀՄ-ը արտադրանքի մի շարք կարևորագույն տեսակների արտադրության ծավալով ոչ միայն հասել է ԱՄՆ-ին, այլև գերազանցել նրան։ Նման կարգի օրինաչափություն մենք տեսնում ենք նաև բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի չափերի տեսակետից։ Սովետական Միությունը արդեն գերազանցում է ԱՄՆ-ին բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի այնպիսի տեսակներով, ինչպիսիք են չուգունը, պողպատը, ցեմենտը, բրդե գործվածքեղենը, կաշվե կոշիկը, շաքարշաքարավազը (հայրենական հումքից), ցորենը, կարտոֆիլը, կաթը, կենդանական յուղը և այլն։ Անկասկած է, որ նոր, տասներորդ հնգամյակում ևս ՍՍՀՄ և ԱՄՆ-ի բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի (ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական) հարաբերակցությունը կփոխվի հօգուտ Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների։

Երկու սիստեմների տնտեսական մրցման կարևորագույն ասպարեզն ու ցուցանիշն է աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի և մակարդակների հարաբերակցությունը սոցիալիստական և կապիտալիստական երկրներում։ Վ. Ի. Լենինը նշել է, որ «կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթվել և կհաղթվի նրանով, որ սոցիալիզմն ստեղծում է նոր, շատ ավելի բարձր՝ աշխատանքի արտադրողականություն։ Դա շատ դժվար և շատ երկարատև գործ է, բայց դա սկսված է, ահա թե որն է ամենագլխավորը»[15]։ Այդ գործում ևս սոցիալիզմն արդեն ձեռք է բերել լուրջ նվաճումներ թե՛ աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի և թե՛ մակարդակների տարբերության վերացման տեսակետից։

Աշխատանքի արտադրողականության աճի տեմպերով Սովետական Միությունը վաղուց գերազանցել է զարգացած կապիտալիստական երկրներին, այդ թվում նաև ԱՄՆ-ին։ Սոցիալիստական պլանաչափ, առանց ցիկլերի ու ճգնաժամերի զարգացող տնտեսության պայմաններում գործում է հասարակական աշխատանքի արտադրողականության անշեղ բարձրացման տնտեսական օրենքը, մի բան, որ բացակայում է հակամարտ հակասություններ ունեցող և ցիկլորեն զարգացող կապիտալիստական տնտեսությունում։ Եթե 1950 թ. ընդունենք որպես 100, ապա 1974 թ. աշխատանքի արտադրողականության աճը մեկ աշխատողի հաշվով ՍՍՀՄ-ում կազմել է 427 տոկոս, Մեծ Բրիտանիայում՝ 164, ԳՖՀ-ում՝ 293, Ֆրանսիայում՝ 307, իսկ ԱՄՆ-ում՝ 217 տոկոս[16]։ Ընթացիկ տասներորդ հնգամյակում ևս ՍՍՀՄ-ում աշխատանքի արտադրողականությունը աճելու է բարձր տեմպերով. արդյունաբերության մեջ դրա աճը կազմելու է 30—34 տոկոս, իսկ գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության միջին տարեկան մակարդակը պետք է բարձրացվի 27—30 տոկոսով։ Ընդ որում աշխատանքի արտադրողականության հաշվին պետք է ստացվի արդյունաբերական արտադրանքի աճի մոտ 90 տոկոսը, ազգային եկամտի աճի 85—90 տոկոսը (ին-

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 523։

16 «Народное хозяйство СССР в 1974 году», էջ 110։

ներորդ հնգամյակի 80 տոկոսի դիմաց)։ Այս նշանակում է, որ 1976—1980 թթ. հնգամյակում ոչ միայն կապահովվեն աշխատանքի արտադրողականության աճի բարձր տեմպեր, այլև մի նոր լուրջ քայլ կկատարվի ՍՍՀՄ և ԱՄՆ-ի միջև աշխատանքի արտադրողականության մակարդակների տարբերության վերացման ասպարեզում։ Իսկ այդ տարբերությունը, որ պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով, դեռ զգալի է. 1975 թ. տվյալներով ՍՍՀՄ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը կազմում էր ԱՄՆ-ի ավելի քան 55 տոկոսը (1913 թ. 11 տոկոսի դիմաց), շինարարության մեջ՝ ավելի քան 65 տոկոսը, իսկ գյուղատնտեսության մեջ այդ տարբերությունը ավելի մեծ է։ Հետևաբար, դեռ զգալի աշխատանք պետք է տարվի, որպեսզի ՍՍՀՄ-ը աշխատանքի արտադրողականության մակարդակով հասնի և անցնի ԱՄՆ-ին, հատկապես գյուղատնտեսության բնագավառում։

1976—1980 թթ., ինչպես նշեց կուսակցության XXV համագումարը, հանդիսանալու են որակի հնգամյակ՝ տնտեսավարման, որակական ցուցանիշների, աշխատանքի արտադրողականության, ժողովրդական տնտեսության արդյունավետության, արտադրանքի որակի բարձրացման հնգամյակ՝ գործունեության բոլոր օղակներում և մակարդակներում։ Այդ բոլոր խնդիրների լուծման հիմնական միջոցը տեխնիկական առաջընթացն է, ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների զուգակցումը սոցիալիստական պլանային տնտեսության առավելությունների հետ, որպեսզի էլ ավելի բարձրանա ժողովրդական տնտեսության արդյունավետությունը և նոր հաղթանակներ տարվեն կապիտալիստական տնտեսության հետ մրցակցության գործում։ Կուսակցության XXV համագումարում Լ. Ի. Բրեժնևի հաշվետու զեկուցման, Ա. Ն. Կոսիգինի զեկուցման և համագումարի կողմից ընդունված «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» որոշման մեջ առանձնակի ուշադրություն է դարձվում տեխնիկական առաջընթացի հարցերին։ Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և կառավարության հանձնարարությամբ երկրի ակադեմիական ինստիտուտները մինիստրությունների և գերատեսչությունների հետ պատրաստել են 1976—1990 թթ. ՍՍՀՄ գիտատեխնիկական առաջընթացի և նրա սոցիալ-տնտեսական հետևանքների ծրագրի նախագիծը։ Համագումարում իր զեկուցման մեջ Ա. Ն. Կոսիգինը նշեց, որ միասնական տեխնիկական քաղաքականությունը մեքենաշինությանը ներկայացնում է մի շարք ընդհանուր պահանջներ, որ «դրանք մեր արդյունաբերությանը կողմնորոշում են արագացնելու այնպիսի տեխնիկայի ստեղծումը, որը մարմնավորի նորագույն հայտնագործումներն ու գյուտերը և տա տնտեսական բարձր արդյունք»[17]։ Ապա Ա. Ն. Կոսիգինը շարունակում է, որ վերջին տարիների տվյալների համաձայն, մինչև տասը տարի աշխատած հաստոցների տեսակարար կշիռը ընդհանուր հաստոցակազմի մեջ կազմում էր 57 տոկոս, իսկ դարբնամամլակային մեքենաներինը՝ 55 տոկոս և, որ «դա ավելի է, քան Արևմուտքի արդյունապես զարգացած շատ երկրներում»[18]։ Այս փաստը ևս նշանավորում է ՍՍՀՄ-ում արագորեն իրագործվող տեխնիկական առաջընթացը։ Մեքենաշինությունը, որը տեխնի-

17 «Սովետական Հայաստան», 2 մարտի 1976։
18 Նույն տեղում։

կական առաջընթացի սիրտն է, հնգամյակում աշխատանքի գործիքների արտադրությունը պետք է ավելացնի 1,6 անգամ։ Ինչ վերաբերում է վառելիքա-էներգետիկ կոմպլեքսին, ապա խնդիր է դրված, որպեսզի այն զարգանա առավելապես հիդրոէներգիայի, ատոմային վառելիքի և էժան քարածուխի հաշվին, իսկ նավթի և գազի արտադրանքի աճը ավելի ու ավելի մեծ չափով օգտագործվի տեխնոլոգիական կարիքների նպատակով։

Տեխնիկական առաջընթացը, կապիտալ ներդրումների ծավալի հսկայական աճը դեռ ինքնըստինքյան չեն լուծում բոլոր հարցերը։ Խնդիրն այն է, որպեսզի տեխնիկական առաջընթացի հետ միասին անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեն նրանց արդյունավետության բարձրացման համար, որը կապված է մի շարք տեխնիկա-տնտեսական և սոցիոլոգիական կոմպլեքսային խնդիրների լուծման, այդ թվում նաև խնայողության ռեժիմի սիստեմատիկ կիրառման հետ։ XXV համագումարում Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը ընդգծեց. «Ինչքան էլ որ մեծանա մեր հասարակության հարստությունը, խստագույն տնտեսումն ու խնայողությունը մնում են ժողովրդական տնտեսության զարգացման, ժողովրդի բարեկեցության բարձրացման կարևորագույն պայմանը»[19]։

Երկու սիստեմների տնտեսական մրցման ասպարեզում սոցիալիստական առանձին երկրների տնտեսության արդյունավետության բարձրացման ներքին խնդիրներից բացի, կան նաև միջազգային բնույթի խնդիրներ, ինչպիսիք են արտաքին տնտեսական կապերի մեծացումը թե՛ զարգացած կապիտալիստական, թե՛ զարգացող երկրների հետ, և թե՛ հատկապես սոցիալիստական երկրների, առաջին հերթին Տնտեսական փոխօգնության խորհրդի երկրների միջև, նրանց ինտեգրացիան, որը աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման, արտադրության մասնագիտացման և կոոպերացման, պլանների կոորդինացման հիման վրա մեծապես բարձրացնում է սոցիալիստական երկրների տնտեսության արդյունավետությունը և դրանով իսկ աջակցում կապիտալիստական էկոնոմիկայի, նրա ինտեգրացիայի դեմ նոր հաղթանակներ տանելուն։

* * *

Ինչպես կուսակցության XXIV, այնպես էլ XXV համագումարը ՍՍՀՄ գլխավոր տնտեսական խնդիրը համարեցին ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը։ XXV համագումարի կողմից ընդունված «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» որոշման մեջ ասված է. «Տասներորդ հնգամյակի գլխավոր խնդիրն է հետևողականորեն իրականացնել ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու կոմունիստական կուսակցության կուրսը՝ հանրային արտադրության դինամիկ ու համամասնական զարգացման և նրա արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում աշխատանքի որակի ըստ ամենայնի բարելավման հիման վրա»[20]։

---

19 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 73։

20 «Սովետական Հայաստան», 7 մարտի 1976։

Սոցիալիզմը վերացրել է մարդու կողմից մարդու շահագործումը, գործազրկությունը, ապահովել է աշխատանքի ռեալ իրավունքը, մինչդեռ կապիտալիզմի համար բնորոշ է մասսայական գործազրկությունը (ներկայումս զարգացած կապիտալիստական երկրների գործազուրկների բանակը հասնում է ավելի քան 15 միլիոն մարդու)։ Սոցիալիզմի պայմաններում ապահովվում է աշխատավորների կենսամակարդակի սիստեմատիկ բարձրացում, մինչդեռ կապիտալիստական երկրներում աշխատավորների դրությունը վատթարանում է ոչ միայն հարաբերականորեն, այլև հաճախ նաև բացարձակորեն։ Կապիտալիզմի պայմաններում բանվոր դասակարգը, բոլոր աշխատավորները համառ գործադուլային պայքար են ծավալում իրենց կենսամակարդակի պահպանման և բարձրացման համար, մանավանդ ներկայումս կապիտալիստական աշխարհում մոլեգնած ճգնաժամի, ինֆլյացիայի, գների սիստեմատիկ բարձրացման և մասսայական գործազրկության պայմաններում։ Բուրժուական պետությունները, հատկապես ԱՄՆ-ը, կրճատում են սոցիալ-կուլտուրական միջոցառումների ծախսերը և, ընդհակառակը, ավելի ու ավելի են մեծացնում ռազմական ծախսերը։ ԱՄՆ-ի պետական բյուջեն 1977 թ. ֆինանսական տարում (սկսվում է 1976 թ. հոկտեմբերի 1-ից) եկամուտներով նախատեսվում է 351,3 միլիարդ դոլլար, իսկ ծախսերով՝ 394,2 միլիարդ դոլլար, այսինքն բյուջեի դեֆիցիտը կազմելու է մոտ 43 միլիարդ դոլլար, ընդ որում բնակչությունից գանձվող հարկերը մոտ երկու անգամ կգերազանցեն 1972 թ. մակարդակը և կկազմեն 300 միլիարդ դոլլար. դրանց հիմնական ծանրությունն ընկնում է աշխատավորների վրա, մինչդեռ կորպորացիաներից գանձվող հարկերը կավելանան 20 միլիարդից էլ պակաս և կկազմեն մինչև 50 միլիարդ դոլլար։

Սոցիալիստական և կապիտալիստական երկրների աշխատավորների եկամուտները և կենսամակարդակները համեմատելիս չի կարելի զանց առնել մի այնպիսի կարևորագույն գործոն, ինչպիսին են սպառման հասարակական ֆոնդերը սոցիալիստական երկրներում, որոնց նշանակությունը աշխատավորների կենսամակարդակի բարձրացման գործում ավելի ու ավելի է մեծանում։ Խոսքը վերաբերում է սոցիալիստական պետության այն հսկայական ծախսերին, որ արվում են ձրի կրթության, առողջապահության, կենսաթոշակների, նպաստների և այլնի համար։ Մինչդեռ կապիտալիստական երկրներում աշխատավորները չափազանց մեծ ծախսեր են կատարում կրթության, բուժսպասարկման, բնակարանային վարձի և այլ կարիքների համար։ Անցած իններորդ հնգամյակում կուսակցության XXIV համագումարի որոշումների իրագործումով զգալիորեն բարձրացավ ՍՍՀՄ աշխատավորների կենսամակարդակը։ Միայն այդ հնգամյակում սոցիալ-կուլտուրական նոր միջոցառումներին այնքան միջոցներ էին հատկացված, որքան նախորդ երկու հնգամյակներում՝ միասին վերցրած։ Բնակչության մեկ շնչի հաշվով ռեալ եկամուտները բարձրացան մոտ 1/4-ով, բարելավվեց 56 միլիոն սովետական մարդկանց բնակարանային դրությունը, 40 տոկոսով ավելացան սպառման հասարակական ֆոնդերից վճարումները և արտոնությունները, ավելացվեցին բանվորների, ծառայողների, կոլտնտեսականների կենսաթոշակները, ուսանողների թոշակները։ Ընթացիկ տասներորդ հնգամյակում կուսակցության XXV համագումարի կանխատեսումների իրագործման հիման վրա մի նոր լուրջ քայլ կարվի ՍՍՀՄ աշխատավորների կենսամակարդակի

բարձրացման գործում։ Հնգամյակում բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները բարձրացվելու են 20—22 տոկոսով, բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը՝ 16—18 տոկոսով (1980 թ. այն հասնելու է ոչ պակաս քան 170 ռուբլու), կոլտնտեսականների եկամուտները հասարակական տնտեսությունից ավելանալու են 24—27 տոկոսով, սպառման հասարակական ֆոնդերից բնակչությանը տրվող վճարումները և արտոնությունները ավելացվելու են 28—30 տոկոսով և 1980 թ. հասնելու են մոտ 115 միլիարդ ռուբլու։ Հնգամյակում կավարտվի նվազագույն աշխատավարձի բարձրացումը, ինչպես նաև կավելացվեն արտադրական ոլորտում միջակ վարձատրվող աշխատողների դրույքներն ու ռոճիկները և այլն։ Հատուկ միջոցառումներ են նախատեսվում կանանց աշխատանքի պայմանների բարելավման ուղղությամբ. փոքր երեխա ունեցող կանանց համար կսահմանվի մասնակիորեն վճարովի արձակուրդ՝ մինչև երեխայի մեկ տարին լրանալը։ Բացի այդ, երեխաներ ունեցող կանանց հնարավորություն կտրվի աշխատելու ոչ լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ, ինչպես նաև տանը աշխատելու հնարավորություն։ Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին հնգամյակում նախատեսվում է կառուցել 545—550 միլիոն քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տներ և այլն։

Այսպիսով, սոցիալիզմի մրցումը կապիտալիզմի հետ ընթանում է ժողովրդական տնտեսության և սոցիալական զարգացման բոլոր հիմնական ցուցանիշների գծով։

Բուրժուազիան և նրա գաղափարախոսները ամեն կերպ փորձում են, մի կողմից, գովաբանել կապիտալիզմը, կոծկել նրա խոր, արմատական հակասությունները, իսկ մյուս կողմից՝ վատաբանել սոցիալիզմը, նսեմացնել նրա տնտեսական և սոցիալական նվաճումները՝ շեշտը դնելով մեր կյանքում եղած թերությունների և բացերի վրա, ուռճացնելով դրանք։ Կուսակցության XXV համագումարում Լ. Ի. Բրեժնևը իր հաշվետու զեկուցման մեջ նշեց. «Այո, մենք գիտե՛նք, որ դեռևս ոչ բոլոր պրոբլեմներն են լուծված։ Մենք մեր բոլոր քննադատներից լավ գիտենք մեր թերությունները, տեսնում ենք դրժվարությունները։ Եվ մենք հաջողությամբ հաղթահարում ենք դրանք։ Մենք տեսնում ենք և գիտենք այն ուղիները, որոնք տանում են դեպի մեր հասարակարգի հետագա զարգացում և կատարելագործում»[21]։

Բուրժուական գործիչները և գիտնականները փաստերի, սոցիալիստական երկրներում սոցիալական պրոբլեմների լուծման միջոցառումների ազդեցության տակ ստիպված են ընդունելու սոցիալիզմի մի շարք առավելությունները կապիտալիզմի նկատմամբ։ Ամերիկյան բուրժուական հայտնի տնտեսագետ Դ. Կ. Հելբրայտը վերջերս հայտարարեց. «Ինձ հիացնում են այն հսկայական ջանքերը, որ կապված են սովետական հնգամյա պլանների կազմման և այն հսկայական նվաճումների հետ, որոնց վրա հենվում է ամեն մի այդպիսի ծրագիրը»[22]։ Իսկ արտասահմանյան մեր բարեկամները հրճվանքով են գիտում սովետական ժողովրդի նվաճումները էկոնոմիկայի, սոցիալական կյանքի ասպարեզներում։ Այդ փայլուն կերպով արտահայտ-

---

21 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 145։

22 «Правда», 10 февраля 1976.

վեց կուսակցության XXV համագումարի հյուրերի՝ սոցիալիստական, զարգացած կապիտալիստական, զարգացող երկրների պատգամավորների ելույթներում և այն բարձր գնահատականում, որ նրանք տալիս էին հատկապես սոցիալիստական էկոնոմիկայի առավելություններին կապիտալիստականի նկատմամբ։

Սոցիալիստական երկրները կապիտալիզմի հետ մրցման մեջ հենվում են իրենց տնտեսական և սոցիալական սիստեմի մշտական առավելությունների վրա, և կասկած չկա, որ սոցիալիզմը կարճատև պատմական ժամանակաշրջանում համաշխարհային էկոնոմիկայում կդառնա առաջատար ուժը։